

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

### ՏԻԳՐԱՆ ԵՎ ԴԻԱՆԱ ՀԱՃԵԹՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### ՄԻՐԵՑԵԱԼ ԶԱՒԱԿԱՅ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐՔՈՅ ԷԶՄԻՄՏԵՆԻ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՏԻԳՐԱՆ ԵՒ ՏԻԱՆԱ ՀԱՃԵԹԵԱՆԻՆ ՈՐ Ի ՄՈՆԹՐԵԱԼ Ի ԳԱՆԱՏԱ

Այսօր, 18 Ապրիլ, Ձեր կեանքի ամենէն զեղեցկագոյն եւ երջանկայից պահերէն մէկն է, երբ Ձեր աչքերով կը տեսնէք Ձեր աստուածահաճոյ ու հայրենաշէն իրագործումներէն մէկը եւ բերկրանքի գերազանց զգացումով կը հրճուիք Ձեր ընտանեկան հարազատներու եւ քարեկամներու հետ միասին:

Երկար տարիներ ի վեր Ձեզ ճանչցած ենք որպէս մեր Եկեղեցոյ, ազգի, Հայրենիքի եւ մշակոյթի նուիրուած ամուլ մը, որ զիտցած է իր ծնողներէն ժառանգել մեր ազգի ընտրելագոյն առաքինութիւններէն մէկը՝ ՍէՐ հանդէպ Աստուծոյ, Եկեղեցիին եւ Հայրենիքին:

Դուք ունեցաք յմաստնութիւնը եւ քաջութիւնը այդ Սէրը գործի՝ վերածելու, ուրկէ բարիքները աղբերացան եւ կ'աղբերաման մեր Եկեղեցոյ եւ ազգի կեանքին մէջ ի Մոնթրէալ եւ այլուր:

Մայր Հայրենիքը՝ Հայաստանը, մշտական ներկայութիւն եղաւ Ձեր կեանքին մէջ: Եւ ահա Դուք Ձեր լիառատ նուիրատուութեամբ Ձեր բաժինը բերիք մեր Եկեղեցոյ ծաղկման մեր մայր հողի վրայ՝ ստանձնելով բարերարութիւնը հիմնական վերանորոգման Նորավանքի Բուրբելյաշէն Ս. Աստուածածին Եկեղեցիին, որ մեր Եկեղեցոյ եւ ճարտարապետութեան ամենէն յանկուցիչ կեդրոններէն մէկն է եղած դարեր շարունակ Սիւնեաց աշխարհի մէջ եւ ողջ Հայաստանի տարածքին վրայ: Մեր Առաքելական Ս. Եկեղեցոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի շքեղ իրագործումներէն մէկն է անոր այդ ամբողջական վերականգնումը եւ շրջապատի քարեզարդումը, որ պիտի խօսի յաջորդող սերունդներուն յատուկ գրաւչութեամբ:

Ի գնահատութիւն Ձեր այս օրինակելի բարերարութեան, այսու Հայրապի-

տական Կոնդակալ Չեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն կարգի շքանշանը՝

### Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԷՆՈՐԻՉ :

Կ'աղօթենք, որ Աստուած Չեզի եւ Չեր ընտանիքի անդամներուն պարզեւ քաջատողջ եւ երջանկալից կեանք: Թող Ամենաբարին Աստուած օրհնէ յիշատակը Չեր ծնողաց՝ Լեւոն եւ Անժել Հաճեթեաններու եւ Յովհաննէս Ստեփանեանի: Բի՛ւր օրհնութիւն Չեզ ի Ս. Էջմիածնէն:

Ողջ լիբուք ի Տէր. գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւետ օրհնեալ ի Մենջ. Աճէն:

### ԳԱՐԵԳԻՆ Ա

### ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Տուալ Կոնդակալ ի 18 Ապրիլի  
Յամի Տեառն 1999 եւ ի Թուին Հայոց ՌՆԽԸ  
ի Մայրավանս Արքոյ Էջմիածնի  
Ընդ համարաւ Է/225*